«Ժամանակակից մոտեցումները մանկական ստոմատոլոգիայում»

2023թ. մայիսի 24-ին, 25-ին, 29-ին և 30-ին (կրկնողաբար) Երևան քաղաքում «Մեդիտրինա ուսումնական կենտրոն» ՍՊԸ կողմից կանցկացվի «Ժամանակակից մոտեցումները մանկական ստոմատոլոգիայում» թեմայով գիտագործնական դասընթաց: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ բժիշկ-ստոմատոլոգներ և մանկական ստոմատոլոգներ: Մասնակիցներին կշնորհվի ՇՄԶ 8 տեսական և 12 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել (033)00-32-01 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

. Մարտի 14–17, 2022թ, (կրկնողաբար), ք. Երևան («Ստոմ Լայն» ստոմատոլոգիական կենտրոն)

«Մեդիտրինա ուսումնական կենտրոն» ՍՊԸ

Օր 1		
09:00-11:00	**Դասախոսություն** 1. Կաթնատամների անատոմիան և առանձնահատկություններ: Համեմատությունը մշտական ատամների հետ: 2. Մանկական ստոմատոլոգիական սենյակ 3. Երեխայի առաջին այցը մանկական ստոմատոլոգին • Ծանոթություն բժշկի ու նրա օգնականի հետ • Փոքրիկը ծանոթանում է ստոմատոլոգիական սարքավորումներին և գործիքներին 4. Բերանի խոռոչի զննում, բուժման պլանավորում, երեխայի վարքի կառավարում	Նարա Անդրեասյան
11:00-11:10	Ընդմիջում	
11:10-14:10	**Գործնական աշխատանք**	
Օր 2		
09:00-11:00	**Դասախոսություն** Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելումը. Ա) Ֆտորացումը, որպես ատամնափուտի կանխարգելում Բ) Պարօդոնտիտի կանխարգելում: Ատամնափառ, նրա կազմությունը, ազդեցությունը պարօդոնտի հիվանդությունների զարգացման գործում: Ատամնափառի հայտնաբերում, հեռացում:	Նարա Անդրեասյան

	Գ) Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներ։ Ջրի ֆտորացում, բնակչության շրջանում բերանի խոռոչի հիգիենայի ուսուցում։	
11:00-11:10	Ընդմիջում	
11:10-14:10	**Գործնական աշխատանք**	
Օր 3		
09:00-11:00	**Դասախոսություն** • Տեղային անզգայացումը մանկական տարիքում։ • Կաթնատամների կարիես, բուժման առանձնահատկությունները մանկական տարիքում։	Նարա Անդրեասյան
11:00-11:10	Ընդմիջում	
11:10-14:10	**Գործնական աշխատանք**	
Օր 4		
09:00-11:00	**Դասախոսություն** Կաթնատամների էնդոդոնտիկ բուժում։ Վիտալ ամպուտացիա և պուլպէկտոմիա։ Ախտորոշում, կատարման ցուցումներն ու հակացուցումները։ Կատարումը փուլ առ փուլ։	Նարա Անդրեասյան
11:00-11:10	Ընդմիջում	
11:10-14:10	**Գործնական աշխատանք**	

Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ և մանկական ստոմատոլոգներ։
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ յուրաքանչյուր խմբում 20-25 հոգի։

Գործնական աշխատանքների ընթացքում մասնակիցներին ներկայացվելու և քննարկվելու են կլինիկական դեպքեր, նրանցից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա ներկայացնելու նաև սեփական աշխատանքի ընթացքում հանդիպած բարդ կամ առանձնահատուկ կլինիկական իրավիճակները, քննարկելու բուժման և հիվանդների վարման օպտիմալ տերբերակները դասընթացավարների և կլինիկայի առաջատար մասնագետների հետ։

Ծրագրի անբաժանելի մասն են կազմում գործնական աշխատանքներ, որոնք ուղղված են մասնակիցների գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը և իրականացվելու են կլինիկական պայմաններում, մուլյաժների, ֆանտոմների կիրառությամբ։